



<https://printo.it/pediatric-rheumatology/AM/intro>

Վերջույթների ցավային համախտանիշներ

Տարբերակ 2016

5. Աճման ցավեր:

5.1 Ի՞նչ է սա:

Աճման ցավը բարորակ վիճակ է, որին բնորոշ է վերջույթների ցավ, որը սովորաբար առաջանում է 3-ից 10 տարեկան երեխաների մոտ: Այն կոչվում է նաև «երեխաների մոտ վերջույթների բարորակ ցավ», կամ «վեջույթների կրկնվող գիշերային ցավեր»:

5.2 Ի՞նչ հաճախականությամբ է այն հանդիպում:

Մանկաբուժության մեջ աճման ցավերը հաճախ հանդիպող գանգատներից են: Այն հանդիպում է հավասարապես տղաների և աղջիկների մոտ երեխաների 10-20% -ի մոտ:

5.3 Որո՞նք են հիմնական նշանները:

Ցավը հիմնականում լինում է ստորին վերջույթներում (սրունքներ, ձկնամկաններ, ազդրեր կամ ծնկափոսեր) և այն սովորաբար երկկողմանի է: Այն առաջանում է երեկոյան կամ գիշերը, հաճախ արթնացնելով երեխային: Ծնողները հաճախ նշում են ցավի առաջացում ֆիզիկական ակտիվությունից հետո:

Ցավի դրվագը սովորաբար տևում է 10-ից 30 րոպե, չնայած այն կարող է տատանվել մի քանի րոպեից մինչև մի քանի ժամ: Ցավի ինտենսիվությունը լինում է թեթևից մինչև ծանր: Աճման ցավերը ընդհատվող բնույթ ունեն, առանց ցավի ժամանակահատվածները կարող են տևել մի քանի օրից մինչև ամիսներ: Որոշ դեպքերում ցավի դրվագները կարող են առաջանալ ամեն օր:

5.4 Ինչպե՞ս է այն ախտորոշվում:

Ցավի բնույթը, առավոտյան նշանների բացակայությունը և նորմալ ֆիզիկական զննման տվյալները, թույլ են տալիս հաստատել ախտորոշումը: Որպես կանոն, լաբորատոր տվյալները և ռենտգենագրաֆիան միշտ նորմալ են: Ինչևէ, ռենտգենագրաֆիայով բացառվում են այլ պաթոլոգիաներ:

5.5 Ո՞րն է բուժումը:

Այս պրոցեսի բարորակ բնույթի մասին բացատրությունը կնվազեցնի երեխայի և նրա ընտանիքի անդամների անհանգստությունը: Ցավի դրվագների ընթացքում կարող են օգնել տեղային մերսումը, տաքացումը և թեթև ցավազրկողները: Հաճախակի դրվագներ ունեցող երեխաների համար ուժեղ ցավը նվազեցնելու համար կարող է օգտակար լինել Իբուպրոֆենի երեկոյան տրվող դեղաչափը:

5.6 Ո՞րն է երկարաժամկետ ելքը (պրոգնոզը):

Աճման ցավերը չեն ուղեկցվում լուրջ օրգանական ախտահարումներով, և սովորաբար վերանում են ինքնուրույն ուշ մանկության շրջանում: Երեխաների 100%-ի մոտ այն անցնում է աճին զուգահեռ: